VIVA MTS

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐ

SOCIAL INVESTMENTS

ՀԱՏՈՐ | EDITION 16

VIVA MTS

Արմեն Ավետիսյան
Վիվա-ՄՏՍ-ի գլխավոր տնօրեն

Armen Avetisian
Viva-MTS General Director

Հարգելի՛ ընթերցող,

Մենք ապրում ենք հարատև փոփոխությունների և թափ ստացող տեխնոլոգիական նվաճումների ժամանակաշրջանում, և այդ փոփոխությունների հորձանուտում առավել քան կարևոր է դառնում մարդկությանը դարեր ի վեր ուժ ու կորով տվող արժեքների պահպանումը և անսասան հավատը դեպի Մարդը:

Վիվա-ՄՏՍ-ը՝ որպես Հայաստանում հեռահաղորդակցության և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջատար ընկերություն, անշուշտ, անմասն չի ընթացող փոփոխություններին, բայց, ինչպես և նախկինում, ընկերության գործունեության հիմքում շարունակում է մնալ Կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը՝ հանուն յուրաքանչյուրիս և բոլորիս բարօրության:

Ինչպես և նախկինում, մենք խորապես համոզված ենք, որ ցանկացած տեխնոլոգիական նվաճում, ցանկացած նորարարություն արժեքավոր է այնքանով, որքանով այն ծառայում է անհատապես ամեն մարդու և ընդհանուր՝ հասարակության զարգացմանը և բարեկեցությանը:

Միասնաբար, ձեռք ձեռքի տված, շարունակենք արարել հանուն մեր հայրենակիցների և մեր երկրի:

Dear reader!

We live in an era of perpetual transformation and accelerating technological achievements. In that whirlpool of change it gets increasingly important to preserve the values that have for centuries given strength and stamina to humanity and keep alive the faith in the human being.

Viva-MTS is Armenia's leading telecom and communication technologies company, and, so, definitely, those changes are the part and the parcel of its life as a business. Yet, as before, at the core of the Company's activities is the Corporate Social Responsibility, an attitude adopted for the best of each and every one.

As before, we deeply believe, the value of any technological achievement and any innovation is measured against the good it brings on individual and social scale, and the extent it serves to the development and the prosperity of people in general.

Together, hand in hand, let's keep creating for the well-being of our compatriots and our country.

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and Communication Technologies

• Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative
• Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad

Կրթություն
Education

• Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
Support to Smart Solutions Laboratories
• Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House
• S2S կրթական ծրագրի ներդրում Հայաստանի ավագ դպրոցներում
Introduction of ICT educational program in high schools of Armenia

Առողջապահություն
Healthcare

• Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families
• Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center
• Աջակցություն «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպությանը
Support to the “Soldier’s home” charity non-governmental organization
• Համագործակցություն «Աթենաս» բարեգործական հիմնադրամի հետ
Cooperation with the “Athena” charity foundation

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection

• Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets
• Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ
Cooperation with the “My Forest Armenia” environmental non-governmental organization

Մարզեր
Regions

• Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐ
INFORMATION AND
COMMUNICATION TECHNOLOGIES

Աջակցություն «Բարձր տեխնոլոգիական ոլորտում համաշխարհային ներդրման համար 22 պետական մրցանակ» նախաձեռնությանը

Մտավոր ներուժը մշտապես դիտարկելով որպես երկրի մրցակցային կարևոր առավելություն՝ Վիվա-ՄՏՍ-ը 2022 թվականին ևս սատարեց Բարձր տեխնոլոգիական ոլորտում համաշխարհային ներդրման համար մրցանակը:

«Սինոփսիս Արմենիա» ընկերության նախաձեռնությամբ և Վիվա-ՄՏՍ-ի աջակցությամբ 2009 թվականին ստեղծված մրցանակը յուրաքանչյուր տարի շնորհվում է համաշխարհային SS ոլորտում բացառիկ ներդրում կատարած հեղինակավոր անհատի: 2021 թվականի մրցանակակիր դարձավ IBM ընկերության էլեկտրոնային նախագծման ավտոմատացման (EDA) խմբի փոխնախագահ Լեոն Ստոկը:

Support to the “State Award of Republic of Armenia for Global Contribution to Humanity through High-Tech” initiative

Viewing the intellectual potential as one of the competitive equities of the country, in 2022 Viva-MTS continued supporting the State Award of Republic of Armenia for Global Contribution to Humanity through High-Tech.

The award, founded upon “Synopsys Armenia” initiative and Viva-MTS support in 2009, is given to people having outstanding contributions in the sphere of information technologies. The winner of the 2021 award was Leon Stok, the Vice President of IBM’s Electronic Design Automation group.

Աջակցություն Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային

Վիվա–ՄՏՍ–ը «Սինոփսիս Արմենիա» ընկերության կողմից կազմակերպվող՝ միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան ամենամյա միջազգային օլիմպիադայի գլխավոր գործընկերն է: Օլիմպիադայի հիմնական աջակիցներն են «Յունիքոմփ»–ը և «Հայաստան» համահայկական հիմնադրամը: Օլիմպիադայի հովանավորներից են S2S գործատուների միությունը, «Վիասֆեր» տեխնոպարկը և «ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ» ապահովագրական ընկերությունը:

Օլիմպիադայի թեմաները ներառել են՝ «Թվային ինտեգրալ սխեմաների նախագծում և թեստավորում», «Անալոգային և խառը ազդանշանային ինտեգրալ սխեմաների նախագծում», «Կիսահաղորդչային սարքեր և տեխնոլոգիա» և «Էլեկտրոնային նախագծման ավտոմատացման մաթեմատիկական և ալգորիթմական խնդիրներ»:

2022 թվականին Միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային 17–րդ օլիմպիադային մասնակցել է 12 երկիր ներկայացնող 307 մրցակից:

Support to the Annual Microelectronics International Olympiad

Viva–MTS is the general partner of the Annual Microelectronics International Olympiad held in Armenia. The main supporters are “Unicomp” and the “Hayastan” All Armenian Fund. Among the sponsors of the Olympiad are the Union of ICT Employers, “Viasphere” Technopark, and “INGO ARMENIA” Insurance Company.

Olympiad topics for 2022 included: Digital IC Design and Test, Analog and Mixed Signal IC Design and Test, Semiconductor Devices and Technology, and Mathematic and Algorithmic Issues of Electronic Design Automation (EDA).

In 2022 the Annual International Microelectronics Olympiad attracted 307 participants from 12 countries.



ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

EDUCATION

Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին

Վիվա-ՄՏՍ-ը, Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միության (ՏՀՏԳՄ) հետ համագործակցության շրջանակում հատուկ ուշադրություն է դարձնում խելացի լուծումների կենտրոնների և լաբորատորիաների ստեղծմանը, ինչպես նաև համատեղ աշխատանքային միջավայրի (co-working space) գաղափարի ներդրմանը:

Վիվա-ՄՏՍ-ի աջակցությամբ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի խելացի լուծումների կենտրոնում արդեն վերանորոգվել է ժամանակակից սարքավորումներով հագեցած վեց լաբորատորիա:

Support to Smart Solutions Laboratories

Viva-MTS, with the partnership of The Union of Employers of ICT, attaches great importance to the creation of smart solutions centers and laboratories, as well as the introduction of the idea of the co-working spaces.

With the support of Viva-MTS, six laboratories with modern equipment have already been renovated at the Smart Solutions Center of the National Polytechnic University of Armenia.

Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին

2022 թվականին «Hero House»-ում տեղի է ունեցել «Traction» ծրագրի 3-րդ շրջանի տեղեկատվական հանդիպումը: Ծրագիրը նպատակ ունի օգնելու պրոդուկտ ունեցող և արդեն իսկ արդյունքներ գրանցած ստարտափներին արագացնել իրենց աճը և ներդրումներ ներգրավել:

Ծրագրի շրջանակում, կրթական, ֆինանսական, մեդիա, տեղեկատվական անվտանգության, դեղագործության և առողջապահության ոլորտներում տեխնոլոգիական լուծումներ առաջարկող ութ ստարտափներն ինտենսիվ աշխատել են մի շարք միջազգային ընկերություններից մենթորների հետ:

«Traction» ծրագիրն իրականացվում է «Քաթալիսթ» հիմնադրամի կողմից՝ Եվրոպական միության «ԵՄ-ն բիզնեսի համար» նախաձեռնության ներքո՝ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (German Development Cooperation-GIZ) կողմից իրականացվող «Տեխնոլոգիաների զարգացում Հայաստանի համար» ծրագրի աջակցությամբ:

Հայաստանի հեռահաղորդակցության առաջատար օպերատոր Վիվա-ՄՏՍ-ը հանդիսանում է նախաձեռնության կորպորատիվ գործընկերն ու աջակիցը:

Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House

In 2022, an information meeting of the 3rd batch of the “Traction” program took place at “Hero House”. The program aims at supporting startups already having developed products, with definitive results, to pace up their growth and attract investments.

As part of the program 8 startups offering technological solutions in education, finances, media, information security, pharmacy, and healthcare have closely worked with mentors from a number of international companies.

The “Traction” program is implemented by “Catalyst” Foundation and is supported by the European Union’s EU4Business “Technology Development for Armenia” project implemented by GIZ.

Viva-MTS, Armenia’s leading telecommunications operator, has joined the initiative as a Corporate Partner and supporter.

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ
HEALTHCARE

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին

Հայաստանում գործող «ՍՈՐՍ» հիմնադրամը համախմբել է հաշմանդամության տարատեսակ խնդիրներով զբաղվող հմուտ մասնագետների՝ ապահովելով աշխատանքով նեղ մասնագիտացմամբ երիտասարդ կադրերի և աջակցելով թիրախային խմբում հայտնված ընտանիքներին ու երեխաներին: Հիմնադրամի նպատակներից է հատուկ խնամքի կարիք ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին դուրս հանել ինքնամեկուսացումից և վերջիններիս համար ապահովել կյանքի բնականոն ընթացք:

2016 թ.-ից Վիվա-ՄՏՍ-ը մասնակցում է հիմնադրամի կողմից կազմակերպվող տարատեսակ ծրագրերի:

2022 թվականին հիմնադրամի կողմից իրականացվող «Անհատական օգնական» ծրագրի շրջանակում ներառվել է 38 երեխա: Ծառայությունը մատուցվում է հիմնականում ոչ լրիվ, բազմազավակ, ինչպես նաև անապահով և երկու խնդիր ունեցող երեխայով ընտանիքներին:

Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families

The “SOURCE” Foundation operating in Armenia has united skilled specialists providing professional care to children with disabilities, as well as in creating jobs for young specialists in this sphere, supporting the families in the target group and helping the children. One of the purposes of the fund is to help the children with special needs and their families get out of self-isolation and ensure a normal life for the latter.

Viva-MTS has participated in various projects organized by the foundation since 2016.

In 2022 the “Personal Assistant” program implemented by the foundation supported 38 children. The service is rendered mostly to single-parent families, large families, as well as needy families and families with kids having two health problems.

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ

Արդեն 15 տարի շարունակ, Վիվա-ՄՏՍ-ը աջակցում է երեխաների զարգացման միջազգային կենտրոնին (ԵԶՄԿ)՝ աուտիզմ ունեցող երեխաներին օգտակար լինելու նպատակով: Երեխաների զարգացման միջազգային կենտրոնն՝ իր գլխավոր գործընկեր Վիվա-ՄՏՍ-ի աջակցության շնորհիվ, 2010 թվականից ներառական կրթական մոդել է ներդրել Մորգենթաուի անվան №126 հիմնական ներառական դպրոցում:

Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center

For 15 years, Viva-MTS has been supporting the International Center for Child Development (ICCD) in helping children with autism. With the support of its General Partner Viva-MTS, the International Child Development Center has been implementing an inclusive education model since 2010 at Yerevan basic school №126 after Henry Morgenthau.

Աջակցություն «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպությանը

Վիվա-ՄՏՍ-ի և «Զինվորի տուն» բարեգործական-հասարակական կազմակերպության համագործակցության շնորհիվ այս տարի 44-օրյա պատերազմի ընթացքում վիրավորում ստացած զինվորների համար ձեռք է բերվել հեռակառավարվող 16 օրթեզ: Վիվա-ՄՏՍ-ի աջակցությամբ, մեկ տարի առաջ էլ ձեռք էր բերվել 100 օրթեզ:

Բացի այդ, 2022 թվականին Վիվա-ՄՏՍ-ը «Զինվորի տանը» զգալի գումար է նվիրաբերել՝ քայլքի լաբորատորիայի, կինեզոթերապիայի և էրգոթերապիայի դահլիճների և ճաշարանի շինարարական աշխատանքներն սկսելու նպատակով: Ծրագրի արդյունքում ակնկալվում է ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք թույլ կտան միաժամանակ առավել շատ զինվորի բարձրակարգ սպասարկում ապահովել:

Support to the “Soldier’s home” charity non-governmental organization

This year’s cooperation between Viva-MTS and the “Soldier’s home” charity non-governmental organization, helped purchase 16 remotely controlled orthoses intended for soldiers wounded in the 44-day war. A year ago, Viva-MTS helped the center to purchase 100 units of orthoses.

Besides, in 2022, Viva-MTS has donated a significant amount of money to launch construction of walking lab, kinesitherapy and ergotherapy gyms, as well as the building of a cafeteria. The program is expected to ensure conditions that let provide professional services to a maximum number of soldiers.

Համագործակցություն «Աթենաս» բարեգործական հիմնադրամի հետ

Վիվա-ՄՏՍ-ը և «Աթենաս» բարեգործական հիմնադրամը 2022 թվականին իրականացրել են պիլոտային ծրագիր, որի շրջանակում Հայաստանի սահմանամերձ գյուղերի բնակիչները հնարավորություն են ստացել օգտվելու անվճար ատամնաբուժական ծառայություններից:

Պիլոտային ծրագիրը մեկնարկել է Տավուշի մարզի սահմանամերձ Չինարի գյուղում, որտեղ դրա շրջանակում փոխարինվել է գյուղի բուժկետում տարիներ առաջ տեղադրված ատամնաբուժական աթոռը:

Ծրագրով՝ մայրաքաղաքից պարբերաբար գյուղ այցելող մասնագետներն առաջարկում են ոչ միայն ատամնաշարի և բերանի խոռոչի խնդիրների բուժզննում և բուժում, այլև՝ պրոթեզավորում: Բժիշկ-կամավորները Չինարիի դպրոցականների շրջանում նաև ատամների խնամքի վերաբերյալ դասընթաց են նախաձեռնել:

Cooperation with the “Athena” charity foundation

In 2022, Viva-MTS and “Athena” charity foundation implemented a pilot program, which gave the residents of borderland rural communities of Armenia a chance to get free dental services.

The pilot program was launched in borderland Chinari, a village in Tavush, where a dental chair installed in the local ambulance station years ago was replaced as part of the program.

The specialists volunteering in the community regularly visit it to offer medical check-up and treatment of dental problems, as well as dental prosthetic services. The specialists have also initiated a dental care training for schoolchildren of the village.

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ENVIRONMENTAL PROTECTION

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին

Վիվա-ՄՏՍ-ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը (FPWC) չափազանց կարևոր են համարում Հայաստանում բնության և շրջակա միջավայրի պահպանության գործում կրթական ծրագրերը, ներառյալ՝ երիտասարդ սերնդի համար նախատեսված բնապահպանական կրթական ծրագրերը և բնապահպանական թեմայով փառատոնի և բազմատեսակ միջոցառումների անցկացումը:

2022 թվականին Վիվա-ՄՏՍ-ի աջակցությամբ Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամն անցկացրեց հերթական «Արևորդի» բնապահպանական փառատոնը:

Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets

Viva-MTS and the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) put a particular emphasis on educational programs aimed at nature conservation and environmental protection in Armenia, including educational projects for youth, as well as organization of a festival and wide range of events on environmental topics.

In 2022 the Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets held the “SunChild” environmental festival.

Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ

2022 թվականին Վիվա-ՄՏՍ-ը և «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպությունը անտառապատման ծրագիր են իրականացրել: Աշնանային անտառտնկման աշխատանքների ընթացքում 20 000 ծառ է տնկվել Լոռու մարզի Ձրաշեն գյուղի բարձր լեռնային հատվածում: Համատեղ ծրագիրը ոչ միայն բնապահպանական, այլև մասամբ՝ մարզի բնակչության զբաղվածության խնդիրը լուծելու հնարավորություն է: «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հիմնական աշխատողների գրեթե 80%-ը Լոռու մարզի բնակիչներ են. աշնանային անտառտնկմանը նրանց են միացել ավելի քան 190 հոգի:

Cooperation with the “My Forest Armenia” environmental non-governmental organization

In 2022 Viva-MTS and the environmental non-governmental organization “My Forest Armenia” implemented a re-forestation program. In the result of tree-planting event in autumn some 20 000 trees were planted in a mountainous area in the territory of Jrashen village in Lori. The joint program is an opportunity to solve both an environmental issue and ensure jobs for the residents of Lori. About 80% of the main staff of the organization are residents of Lori. Another 190 have joined them to participate in the autumn fieldworks.

ՄԱՐԶԵՐ
REGIONS

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին

Վիվա-ՄՏՍ-ը և Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամը, տարիների համագործակցության շրջանակում, շարունակում են համայնքներում իրականացնել աջակցության ծրագրեր: Այս տարի ուշադրության կենտրոնում հատկապես եղել են LED-համակարգով արտաքին լուսավորության, ջրամատակարարման և ջեռուցման ենթակառուցվածքային խնդիրների լուծումը մարզային համայնքներում՝ նպատակ ունենալով բարելավել տեղաբնակների կենսամակարդակն ու ապահովել վերջիններիս անվտանգությունը:

Այլընտրանքային էներգախնայող համակարգերի ներդրումը էկոգյուղերի ցանցի ստեղծման կարևոր քայլերից է: Դա թույլ է տալիս գյուղերը ներգրավել կայուն զարգացման գործընթացներում, որոնք հիմնված են բնապահպանական, տնտեսական, մշակութային և սոցիալական բաղադրիչների վրա:

Support to community infrastructure development programs in the regions of Armenia

The Foundation for the Preservation of Wildlife and Cultural Assets (FPWC) and Viva-MTS continue to implement community support programs within the framework of the long-term partnership. This year, the focus was especially on the infrastructure challenges of outdoor lighting with LED lighting system, water supply, and heating in regional communities, with the aim of improving the living standards and ensuring safety of local residents.

Introduction of energy-saving systems is a major step towards setting a network of eco-villages. It lets engage rural communities into processes of sustainable development anchoring on environmental, economic, cultural and social components.

Բովանդակություն
Table of Contents

Ողջույնի խոսք
Welcome address 2

Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաներ
Information and Communication Technologies

Աջակցություն «SS ոլորտում համաշխարհային ներդրման համար Հայաստանի Հանրապետության պետական մրցանակ» նախաձեռնությանը
Support to the “State Award of the Republic of Armenia for Global Contribution to Humanity through IT” initiative 8

Աջակցություն միկրոէլեկտրոնիկայի ամենամյա միջազգային օլիմպիադային
Support to the Annual Microelectronics International Olympiad 10

Կրթություն
Education

Աջակցություն խելացի լուծումների լաբորատորիաներին
Support to Smart Solutions Laboratories 14

Աջակցություն Հայաստանի ստարտափ ակադեմիայի «Traction» ծրագրին և «Hero House»-ին
Support to Armenia Startup Academy Traction Program and Hero House 16

Առողջապահություն
Healthcare

Աջակցություն հաշմանդամություն ունեցող երեխաների և նրանց ընտանիքների խնդիրներով զբաղվող «ՍՈՐՍ» հիմնադրամին
Support to “SOURCE” foundation for children with disabilities and their families 20

Աջակցություն աուտիզմով երեխաների համար կրթավճարի ապահովմանը՝ «Երեխաների զարգացման միջազգային կենտրոնի» հետ համատեղ
Support in covering tuition of children with autism in partnership with the International Child Development Center 22

Աջակցություն «Զինվորի տուն» բարեգործական հասարակական կազմակերպությանը
Support to the “Soldier’s home” charity non-governmental organization 24

Համագործակցություն «Աթենաս» բարեգործական հիմնադրամի հետ
Cooperation with the “Athena” charity foundation 26

Շրջակա միջավայրի պաշտպանություն
Environmental Protection

Աջակցություն Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի՝ շրջակա միջավայրի պաշտպանության նախաձեռնություններին
Support to environmental protection initiatives by the Foundation for the Preservation of the Wildlife and Cultural Assets 30

Համագործակցություն «Իմ անտառ Հայաստան» բնապահպանական հասարակական կազմակերպության հետ
Cooperation with the “My Forest Armenia” environmental non-governmental organization 32

Մարզեր
Regions

Աջակցություն Հայաստանի մարզերում համայնքային ենթակառուցվածքների զարգացման ծրագրերին
Support to community infrastructure development programs in the regions of Armenia 36

Վիվա-ՍՏՍ
«ՍՏՍ Հայաստան» ՓԲԸ
Արգիշտի փողոց 4/1, Երևան 0015, ՀՀ
Հեռ.՝ +37460771111, +37493568777
Ֆաքս՝ +37493298021
Viva-MTS
4/1 Argishti street, Yerevan 0015, RA
Tel.: +37460771111, +374 93568777
Fax: +374 93298021
www.mts.am, info@mts.am